




Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆՏՈՆ ԲՈՆՈՒԿԿԻՐ
ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԱՐԱԲԵՐԵՆ ՀԱՄԱՌՈՏ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ագաթանգեղոսի Հայոց պատմությունը Ե դարից մինչև ԺԶ դարերը ունեցել է բազմաթիվ թարգմանություններ ու համառոտագրումներ, ընդ որում դրանք կատարվել են ութ լեզուներով (հունարեն, արաբերեն, ասորերեն, ղպտերեն, եթովպերեն, լատիներեն, վրացերեն, պարսկերեն): ԺԷ—ԺԸ դարերում հայ ժողովրդի պատմության այս կարևոր աղբյուրը հետաքրքրել է նաև արևմտյան աշխարհը և ունեցել մի իտալերեն մշակում, որից և կազմվել է համառոտ արաբերեն թարգմանություն, որի ձեռագիրը մեզ հաջողվեց հայտնաբերել Բեյրութի ֆրանսիական համալսարանի գրադարանում:

Ագաթանգեղոսի պատմության մշակումներից մեկը հանդիսացող Անտոն Բոնուկիի կազմած իտալերեն վարքի երևան գալը իր ժամանակի համար շատ բնորոշ երևույթ էր:

ԺԷ դարում Իտալիայում և Ֆրանսիայում մեծ հետաքրքրություն է առաջանում հայոց լեզվի և պատմության նկատմամբ: Դա մի կողմից արդյունք էր վերածննդից հետո արևելյան հին ժողովուրդների մշակույթի նկատմամբ Եվրոպայում առաջացած ուշա-

դրությանը, իսկ մյուս կողմից հռոմեական եկեղեցու համար հայոց պատմության ուսումնասիրությունը կարևոր էր դավանաբանական վեճերի մեջ օգտագործելու համար:

ԺԷ դարի առաջին կեսին Միլանի կանոնիկոս Ֆրանչեսկո Րիվոլան հրատարակեց առաջին հայերեն-լատիներեն բառարանը, իսկ ապա նաև հայերեն առաջին քերականությունը լատիներեն լեզվով: Ծուռով այս երկուսն էլ վերահրատարակվեցին Ֆրանսիայի գիտության ճեմարանի հիմնադիր Ռիշելյեի ջանքերի շնորհիվ: 1622 թվականին Գրիգոր ԺԵ Պապը Հռոմում հիմնեց կրոնական մի մեծ հաստատություն՝ «Հավատի տարածման սուրբ միաբանությունը», իսկ 1627-ին Ուրբանոս Ը Պապը հիմնեց մի դպրոց՝ քարոզիչներ պատրաստելու համար, և մի բազմալեզվյալ տպարան¹:

Դարի կեսերին լայն գործունեություն ծավալեցին Բ. Պոդոս Պիրոմալին և Կոնստ Գալանոսը: Դոմինիկյան կարգին պատկանող Բ. Պ. Պիրոմալին դասավանդում էր

¹ Առ, Հայոց պատմություն, Գ, Երևան, 1946, էջ 326:

Նախիջևանի ունիթոն հայերի համար քաղված դպրոցում: Դավանաբանական հարցերին նվիրված եռամստոր աշխատության հեղինակ է թեատինյան կրոնավոր Կղեմես Գալանոս², որը գործել է Կ. Պոլսում, Հայաստանում և Լիովում: Կ. Գալանոսն իր աշխատության առաջին հատորում մանրամասն շարադրում է Հայոց պատմությունը եկեղեցական պատմության շրջանակներում՝ շեշտելով այն սխալ միտքը, թե իբր հայ եկեղեցու մեջ միշտ ձգտում է եղել կաթոլիկ եկեղեցու հետ միաբանության:

ԺԷ դարում Հռոմում գործում էր նաև հայկական տպարան, որի տպած գրքերում և ընդհանրապես լատիներենից հայերենի ունիթոնների ձեռքով կատարված թարգմանությունների մեջ իշխում էր լատինաբան հայերենը, որը զարգացավ ԺԶ—ԺԷ դարերում³:

Ահա այսպիսի մթնոլորտում և ժամանակներում էր, որ երևան եկավ հիսուսյան (ճիզվիտ) կարգին պատկանող Անտոն Բոնուկկիի շարադրած Գրիգոր Լուսավորչի վարքը⁴: Բոնուկկին ապրել է ԺԸ դարի առաջին կեսին, և ունի եկեղեցու պատմությանը նվիրված աշխատություններ:

Բոնուկկի⁵ կազմած վարքը գեղարվեստական մշակում չէ (ԺԵ դարի հեղինակ Առաքել Բաղիշեցու ոտանավոր պատմության մեջ), ալ դավանաբանական վեճերի համար կազմված մի երկ, որ ի մի են բխում Գրիգոր Լուսավորչի մասին եղած բազում աղբյուրներ, որոնք հեղինակը հատուկ ցուցակով տալիս է աշխատության ԺԴ գլխում. «Առ ի ցուցանել որքան իցե հոչակաւոր անունն արքայն Գրիգորի հայի, ընդ բոլորում աշխարհի ողորպիտի, առաջաբերի մին երկայն շարակարգութիւնն հեղինակաց ամենից լեզուաց, յորոց հաւատարմաբար արտահանեցեալ է պատմութիւնս այս»⁶: Ցուցակում հիշված է 39 աշխատություն՝ լատինական և հայկական հայտնավորքներ, տոնացույցներ, ճառընտիրներ և

այլն: Հիշվում է նաև վերոհիշյալ լատիներեն-հայերեն քառարանի հեղինակ Հակոբ Վիլյոտի մի գործը և մանավանդ Կղեմես Գալանոսի հայտնի աշխատությունը, որ մի ամբողջ հատված կա հայոց դարձի պատմության վերաբերյալ:

Բանն այն է, որ նույն ԺԸ դարում Բոնուկկիի երկը ոչ միայն հայերենի էր թարգմանվել, այլև համառոտ կերպով փոխադրվել արաբերենի՝ ում մարոնի⁷ կրոնավորի ձեռքով: Այս արաբերեն համառոտումը շատ ավելի կարճ է, քան Բոնուկկիի երկը, որը 222 էջից է բաղկացած (իսկ բուն Գրիգոր Լուսավորչին վերաբերող մասը 137 էջ է): Բացի դրանից, դժվար է ասել, թե մարոնի մատենագրի միակ աղբյուրը Բոնուկկիի կազմած պատմությունն է: Սակայն հիշատակարանում մա ճախընտրում է հենց այս գիրքը հանձնարարել ընթերցողին:

Բանն այն է, որ դեռևս կիլիկյան շրջանից սկսած Արևմուտքում գոյացել է Գրիգոր Լուսավորչի վարքի մի ուրույն տարբերակը, որին սերտորեն առնչվում է հայտնի Դաշանց թուղթը: Իսկ ԺԷ դարում այս տարբերակը ձևավորված ենք գտնում Կղեմես Գալանոսի գրքում, որ հատկապես նշվում է նաև Դաշանց թուղթը: Այս տարբերակի նպատակն է՝ ցույց տալ, որ հայ եկեղեցին եղել է Հռոմին ենթակա, և որ Հայոց առաջին կաթողիկոսն իր իշխանությունը ստացել է Հռոմի Պապից: Հենց վերնագրում մարոնի կրոնավորի կազմած համառոտումը շեշտում է, որ Գրիգոր Լուսավորչի ժամանակ Հայաստանն ընդունեց «կաթողիկե հավատքը», ընդ որում վերջին արտահայտությունը միշտ փոխադրվում է քրիստոնեություն հասկացությամբ:

Հոփսիսիյանց կույսերի ճահատակության քաժմում մարոնի հեղինակն ավելի առաջ է գնում, քան Կղեմես Գալանոսը կամ Անտոն Բոնուկկին: Եթե վերջիններս Ասաթանգեղոսի պատմությունը կրկնում են այն հարցում, որ Դիոկղետիանոս կայսեր ձեռքից փախած գեղանի Հոփսիսիյե կույսին սիրահարվեց հայոց Տրդատ թագավորը և սպանեց իրեն չենթարկվելու պատճառով, ապա մարոնի հեղինակը բոլորովին չհիշելով, թե Տրդատը սիրահարված էր, գտնում է, որ Տրդատը սպանեց Հոփսիսիյեին, քանի որ վերջինս չուզեց ամուսնանալ Դիոկղետիանոսի հետ: Ուրեմն հայոց թագավորը հանդես է գալիս որպես Հռոմի կայսեր սուկ կամակատար կամ հանդիսացող:

Այս արաբերեն համառոտագրությունը

² Կղեմես Գալանոս, Միաբանություն հայոց ար. եկեղեցւոյն ընդ մեծի ար. եկեղեցւոյն Հռոմայ, Հռոմ, 1650:

³ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Բ, Երևան, 1952, էջ 308—323:

⁴ Հայերեն թարգմ.՝ Պատմութիւն կենաց, մարտիրոսութեան և սքանչելեաց արքայն Գրիգորի արհիեպիսկոպոսի և առաջնորդի Հայաստանի, Ստորագրեցեալ ի Սնտոնէ Մարիա Բոնուկկիէ ..., Վենետիկ, 1737: Տես՝ Հ. Աճառյան, Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1959, էջ 950—958:

⁵ «Nouvelle biographie universelle». t. v. Paris 1855. p. 663.

⁶ Բոնուկկի, էջ 138:

⁷ Մարոնիները միացել են հռոմեական եկեղեցուն դեռևս ԺԳ դարում:

հիշում է, որ Գրիգոր Լուսավորիչը եկեղեցիներ կառուցեց Պարսկաստանում, Ասորիքում, Հնդկաստանում և այլ երկրներում: Սա նույնպես Արևմուտքում կազմավորված տալ թերակիսն հատուկ մանրամասնությունն է: Կղեմես Գալանոսը գրում է. «Եր դարձալ մի թունացի զարմանալի բան եթե ընթեռնումք որ սուրբն Սեդրեստրոս հաստատեաց ըզսուրբն Գրիգոր Լուսավորիչն՝ փոխանորդ իր ի վերա ասիական միջնորդ կողմանն»⁸: Այս ավելացնում է, որ Գրիգորը քրիստոնեություն տարածեց «ի մեջ պարսից, ասորոց, հոնաց և ամատացոց»⁹: Իսկ ըստ Բոնուկկիի Հոսմի Սեդրեստրոս Պապը Գրիգորին սեղմելով իր կրծքին, «չայտնեաց ամենեցուն զնա պատրիարզ հայոց, ետ նմա զհշխանությունն ձեռնադրելով պատրիարզն վրացոց և թե երբ երկու պատրիարզք Աղեքսանդրացին և Անտիոքացին ձեռնադրիցեին զմին նոր պատրիարզ, միշտ այս իցեր համաճությունամք նորա և իրոց օրինաւորաց աջորդաց»¹⁰: Իսկ արաբներն համառոտագրությունը Գրիգոր Լուսավորչի հեղինակությանն է ենթարկում ոչ միայն շրջակա քրիստոնյա համայնքները (վրաց, ասորոց և այլն), այլև Պարսկաստանն ու Հնդկաստանը:

Գրիգոր Լուսավորչի նշխարները Իտալիա տանելու մասին արաբներն վարքի խոսքերը նույնպես հոսմեական տարբերակի նյութերից են: Ըստ Բոնուկկիի, Գրիգոր Լուսավորչի նշխարները մաս-մաս տարվեցին Վաղարշապատ, Սիս (Ս. Սուփիա), Կոստանդնուպոլիս, ապա մնացածը տարվեց Իտալիա, ընդ որում դրանք բաժանվեցին տարբեր քաղաքների մեջ՝ Նապոլի (Նեապոլիս), Հոսմ, Վենետիկ, «մանաւանդ ի Լիկուոնայ ուր ես ինքս տեսի զմին մեծահոշակ տաճար կանգնեցեալ»¹¹:

Ստորև տալիս ենք արաբներեն (մարոնի) համառոտագրության հսկերեն թարգմանությունը: Վերջում կա հիշատակարան, որ թարգմանիչը խոսում է անցյալի և իր ժամանակի դավանաբանական վեճերի մասին:

*
* *

Համուն հոր և որդւո և հոգույն սրբո, միակ Աստված ամեն

Այսում ենք բարձրյալն Աստծո օգնությամբ պատմել փառավոր սուրբ մար Գրիգորիոսի (Ղրիդուրիոս) Հայոց համայնքի հոր, բարեխոսի և պաշտ-

պանի վարքը: Նա առաջին եպիսկոպոսն էր, որ կառավարեց ու կարգավորեց Հայոց համայնքը և նրան դարձի թերեց կաթողիկե (ընդհանրական) հավատին, միմյնեռ նրանք կառչած էին կոապաշտության:

Գիտեցիր, որ սուրբ Գրիգորիոսի ծնունդը տեղի ունեցավ Մարմնացյալ Բանին երկու հարյուր հիսուն տարում, Հայաստան երկրում: Նրա մայրն ու հայրը ազնվական ծագում ունեին: Նրա հոր անունն էր՝ Անակ (Անաք), և ծնվել էր պարսից (Աշամ) երկրում: Նրա մայրը կոչվում էր Ոգունի (Ուքիա): Նրանք մեռան, երբ Գրիգորիոսը մանուկ էր: Նա դաստիարակվեց Կապադովկիայի Կեսարիայում (Կալսարիյա ալ-Քաթադուք) այդ քաղաքի կանանցից մեկի կողմից, որի անունն էր Սոփիա (Սուփիա): Նա դաստիարակեց նրան քրիստոնեական ոգով ու մկրտեց: Երբ նա մեծացավ ու գիտություն սովորեց, (Սոփիան) ամուսնացրեց նրան մի քրիստոնյա աղջա հետ, որը նույնպես ազնվական ծագում ուներ: Սա ծնեց նրան երկու որդի: Երկու զավակներին մեծացնելուց հետո նա իր ամուսնու՝ Գրիգորիոսի համաձայնությամբ մտավ կուսմանց վանք և այնտեղ սուրբ կյանք վարեց:

Աստված ներշնչեց սուրբ Գրիգորիոսին, որ բարեկամանա Տրդատի (Տարիդաստոս) հետ, որը պետք է իշխեր Հայոց թագավորության մեջ: Այս բարեկամությամբ հնարավոր կդառնար նրան դարձի բերել քրիստոնեական հավատին, քանզի Տրդատը կուռք էր պաշտում: (Սակայն) նա սիրված էր հոռմեացիներից իր հաղթանակների շնորհիվ, որ տարել էր հոռմեացիների թշնամի Գոթ (Գոտի) լոչված ժողովրդի դեմ մղած պայքարում: Որպես գնահատական իրենց վերոհիշյալ թշնամիների դեմ տարած նրա հաղթանակի, նրանք որոշեցին Տրդատին թագավոր դարձնել Հայաստանում: Այդպես էլ եղավ, քանզի մի քիչ անց նա իրոք դարձավ թագավոր:

Երբ Տրդատը սկսեց իշխել Հայոց թագավորության մեջ, ամեն ջանք թափեց ստիպելու Գրիգորիոսին երկրպագել մի կուռքի, որը կոչվում էր Անահիտ (Դիանա): Սակայն թագավորը հուսախաբ եղավ, քանզի ամեն անգամ, որ խոսում էր կուռքերի պաշտամունքի մասին, պատասխանը միշտ այսպիսին էր՝ Անկարելի է, որ ես համաձայնեմ դրան, քանզի քո կուռքերի պաշտամունքը սատանաների պաշտամունք է, և ով որ նրանց պաշտի, հավիտենական երջանկությունից կզրկվի և արժանի կդառնա դժոխքի մշտնջենական կրակներին: Եվ դու, ով արքա, եթե քո ամբողջ թագավորությամբ հրաժարվելով կոապաշտությունից դարձի չգաս ճշմարիտ Աստծո պաշտամունքին, ապա հավիտենական մահը բաժին կընկնի քեզ:

Այս խոսքերը միշտ կրկնում էր նրան և նրա տերության բոլոր մարդկանց, երբ նրանք նորանոր չարչարանքներ էին տալիս նրան:

Առաջին չարչարանքը՝ պրկեցին սրբի շրթները բերանակալով ու քամիչով ստանց գթության ու ինճահարության, այնպես, ինչպես անասնաբույժ-

⁸ Կղեմես Գալանոս, Ա, էջ 36—37:

⁹ Այսիկքն՝ մարաք:

¹⁰ Բոնուկկի, էջ 111:

¹¹ Նույնը, էջ 135:

ներն են ամուսնացածներին և նույնիսկ դրանից ավելի դաժան ու խիստ:

Երբորոք չարչարանքը՝ նրա ձեռքերը վերև կապեցին ու նրա մարմինը բարձրացրին և նրանից ծանր քարեր կախեցին: Այսպես մնաց տանջվելով յոթ օր առանց ուտելիքի:

Երբորոք չարչարանքը՝ մի ոտքից կապեցին և մարմինը մնաց ոտքից կախված, իսկ նրա ներքևը գարշափոս աղբ վառեցին: Տասը զինվոր նշանակեցին, որ նրան մտրակահարեն: Այսպես մնաց տանջվելով յոթ օր:

Զորքորոք չարչարանքը՝ նրա մարմինը կապեցին պինդ պարաններով և ուժեղ պրկեցին մինչև որ մարմնից արյուն ցայտեց:

Հիմզերորոք չարչարանքը՝ ոտքին բեռներ գամեցին և նրան ստիպեցին այս վիճակում քայլել. ամեն մի քայլում անտանելի սաստիկ ցավ էր զգում:

Վեցերորոք չարչարանքը՝ նրա մարմինը մամուլի մեջ դրեցին, պտուտակները սեղմեցին, որպեսզի նա զգայազուրկ լինի:

Յոթերորոք չարչարանքը՝ աշխատեցին սրբի ուղեղը զանգից հանել քացախի ու վատողի աղի միջոցով, որոնք ներս թափեցին սրբի քթից: Սակայն բարձրյալն Աստված, փառավորվի նրա հզորությունը, այդ բանը թույլ չտվեց, և նրա մարմինը մնաց առողջ՝ փրկվելով ամեն վնասից:

Ութերորոք չարչարանքը՝ սրբին դրեցին ծխով լցված մի տուպակի մեջ և նրան այնպես ուժեղ կապեցին, որ չկարողանար օդ շնչել և խեղդված մեռներ: Այսպես շարունակվեց չարչարվել վեց օր:

Իմաներորոք չարչարանքը՝ նրա մերկ մարմնի վրա թափեցին առատ սառը ջուր սառույցի նման:

Տասներորոք չարչարանքը՝ նրա կողերը քերեցին երկաթե գործիքներով:

Տասնմեկերորոք չարչարանքը՝ սրբի մարմինը սանրեցին երկաթե փշերով:

Տասներկուերորոք չարչարանքը՝ ամբարիշտ արքան հրամայեց իր օգնականներին՝ սրբի մարմինը ծառի գամել, և այսպես չարչարվեց երեք օր:

Տասներեքերորոք չարչարանքը, որով տանջեցին սրբի մարմինը՝ հալած կապարն էր, որ լցրեցին նրա մարմնի վրա:

Տասնչորսերորոք չարչարանքը՝ կապեցին ձեռքերն ու ոտքերը և նետեցին խոր վիրապի մեջ, ուր նետահար կար և տարբեր թունավոր միջատներ:

Այս վիրապում մնաց տասնչորս տարի և մի քրիստոնյա կին, աստվածային ներշնչումով, ծածուկ զալիս էր ամեն կիրակի և մի կտոր հաց զգում նրան: Այս կինը կոչվում էր Հաննա:

Ինչ մեծ է կարողությունը մեր Աստծո, որ պահպանեց սրբին ողջ-առողջ այս տանջանքների մեջ, որոնցից միայն մեկը բավական էր, որ կյանքից զրկեր (Մարդուն): Այսուհանդերձ, թեպետև տանջվում էր, չէր դադարում թագավորին ու մեծամեծներին խրատելուց ու հորդորելուց, որ պաշտեն ճշմարիտ Աստվածը՝ թողնելով կուսաբաշտությունը և փրկվելով հավիտենական տանջանքից, իշխեն մեր Աստծո հետ հավիտյան հավիտենից:

Մի օր սուրհանդակ եկավ Դիոկղետիանոս (Դիոքլետիանոս) թագավորից՝ Տրդատին խնդրելու, որ փնտրի Հոփսիմենին (Ռաբսիմա), քանզի նա շատ գեղեցիկ էր, գերազանցելով իր ժամանակի բոլոր աղջիկներին և պետք է լիներ իր հարսնացուն: Այս աղջիկը միանձնուհի էր կուսանաց վանքերից մեկում բազում այլ աղջիկների հետ, մի զյուսավորի դեկավարության տակ, որի անունն էր Գալանե (Քալինա):

Իսկ Տրդատ թագավորը, երբ ամեն ջանք գործադրեց, որ իրականացնի Դիոկղետիանոս թագավորի ցանկությունը և չկարողացավ ու հուսահատվեց, ապա իր սաստիկ զայրույթից հրամայեց սպանել բոլոր միանձնուհիներին, քանի որ նրանք քրիստոնյա էին և չէին հնազանդվել իր հրամաններին, իսկ նա հրամայել էր, որ Հոփսիմենին հետևան (քրիստոնեական) կրոնից Դիոկղետիանոս թագավորի հարսնացուն դառնալու համար:

Այսպես նրանց կյանքը վերջացավ անհատական թափաբ, ի սեր նրան, որ իր արյունը թափել էր նրանց փրկության համար:

Իսկ Տեր Քրիստոսը, փառավորվի նրա անունը, անմիջապես պատժեց Տրդատ թագավորին և խոզի վերածեց նրան՝ Նաբուգոդոնոսորի (Բոլխատունուր) նման: Պատժեց նաև նրա պետության բոլոր մեծամեծներին. նրանց մեջ դներ մտան, որոնք սաստիկ տանջում էին նրանց:

Մի գիշեր թագավորի քույրը, որի անունն էր Խուրովիդուխտ (Քուսարադուխտա) քնի մեջ երազ տեսավ՝ մի մարդ իջավ երկնքից ու խոսեց ասելով՝ եթե դուրս քերեք Գրիգորիոսին (խոր) վիրապից, ապա թագավորը չի ազատվի այս պատուհասից: Երբ քնից արթնացավ, անմիջապես փութաց դուրս քերել նրան: Նա ողջ-առողջ դուրս եկավ մի հրաշքով, որ զարմացնում է մտքերը: Սուրբ Գրիգորիոսը անմիջապես գնաց թագավորի մոտ, որը երբ տեսավ նրան, խնդրեց թողություն շնորհել և իր համար միջնորդել մեծ Աստծու մոտ, որպեսզի իմըք և իր պետությունը փրկվեն դևերի կատաղությունից, որոնք տանջում էին նրանց:

Սուրբ անմիջապես պատասխանեց նրանց խնդրանքին ու հրամայեց իր մոտ բրել վերոհիշյալ անհատական արքունիների մասունքները և դասավորել իրենց մեծաստանում: Իսկ թագավորն իր օգնականների հետ պետք է գնար այնտեղ ու խնդրեր նրանցից, որ բարեխոսեն Աստծու առջև և Բարձրյալից խնդրեն հավատի օգնությունը սուրբ մկրտության հետ: Միայն դրանից հետո նրանք կարող էին իրենց մարմինների ստողջացման արժանազատ:

Թագավորն անմիջապես հնազանդվեց Գրիգորիոսի հրամանին, խոստովանելով տերության ժողովրդի հետ, որ իրենք սրանից էլ ավելի մեծ պատիժների են արժանի: Սուրբ անմիջապես սկսեց ուղի ցույց տալ նրան կաթողիկե (ընդհանրական) հավատի հարցերում, համոզեց, որ ապաշխարեն, ծոմ պահեն վաթսուս օր և սկսեն եկեղեցիներ կառուցել այդ անհատական կույսերի անունով:

Երբ թագավորը կատարեց սրբի տված հանձնարարությունները, ամմիջապես նրա տեսքը խոզի ձևից մարդկայինի փոխվեց, ինչպես նախապես նշել էինք, և նա ու իր աջորդը տերությունը փրկվեցին դևերի կատաղությունից, որոնք տանջում էին: Ապա շատ հիվանդների, որոնք բոլորտ էին, ջրդոլ ունեին և շատ կաղերի բժշկեց, կույրերի տեսողությունը վերականգնեց և հիվանդներին փրկեց իրենց ցավերից ու նրանց սրտերում վառեց Տեր Քրիստոսի հավատի սիրտ կրակը: Նորից աղաչեց թագավորը, որ նա դառնա իր թագավորության եպիսկոպոսը, սակայն սուրբը մերժեց այդ բանը՝ սպասելով այս հարցում աստվածային թելադրանքի:

Երբ (Աստված) ընտրեց նրան ընդունելու եպիսկոպոսական աստիճանը, ապա սուրբը, ինչպես ասացինք, նախօրոք գիտեր, որ դառնալու է եպիսկոպոս, և այդ մասին տեղեկացրեց թագավորին: Այդ ժամանակ թագավորը հրամայեց իր մեծամեծներին, որ ընկերակցեն սուրբ Գրիգորիոսին Կապադոկիայի Կեսարիայի եպիսկոպոս Ղևոնդիոսի (Լաուսիոս) մոտ, որպեսզի նրանից ընդունի եպիսկոպոսական աստիճանը:

Եպիսկոպոսական ձեռնադրությունից վերադարձի ժամանակ սուրբը կործանեց մի հայտնի մեկնա մի կուտքի անունով, որ կոչվում էր Վահագն (Իրքուլա) Եփրատ (ալ-Ֆուրատ) գետի կողմերում և այնտեղից դուրս բռնեց բազում դևերին ու կառուցեց մի եկեղեցի հանուն Հովհաննես Մկրտչի և նահատակ Առնանգիների (Արտիմիջիմոս) և օրհնեց նրանց անուններով: Ապա այնտեղ աստվածային պատարագ մատուցեց և մկրտեց տասնվեց հոգու այդ կողմերի մեծամեծներից: Երբ տեսան սրբի եռանդը, տասնմեկ հազար հոգի մկրտվեցին:

Գալով Տրդատ թագավորի մոտ (Գրիգորիոսը) անմիջապես մկրտեց նրան, ապա թագավորի քրոջը և կնոջը և մնացած մեծամեծներին: Երանելու եռանդի շնորհիվ բոլորի սրտերում վառվեց հավատի ջերմությունը, ինչպես որ մի քանի օրից մկրտության խորհրդով ընդունեցին ավելի քան հիսուն հազար մարդ, քանզի նրանք տեսել էին մի այլում զլխին խաչով բոլոր նրանց վրա, որոնք մկրտություն էին ընդունում: Այս խաչի լույսն իր փայլով ու ճառագայթումով արեգակից ուժեղ էր:

Բազում եկեղեցիներ կառուցվեցին այդ թագավորության մեջ, և սուրբը եկեղեցիներ կառուցեց Հայոց, Պարսից և Ասորիք (Սուրիա) երկրի համար, ինչպես նաև Հնդկաստանի (Հինդ) բնակիչների և շատ ազգերի համար, որպեսզի նրանց դպրոցներում ծաղկի քրիստոնեական հավատը և շնորհքները: Ապա նա եպիսկոպոսներ ու քահանաներ կարգեց ժողովուրդներին առաջնորդելու համար, որպեսզի քանդեն ու վերացնեն կուսպաշտությունը և հաստատեն կաթողիկե (ընդհանրական) հավատը:

Երբ այս բոլորը լրացավ, նա աստվածային հոգատարությամբ առանձնացավ անապատներում, ուր վերջացավ նրա կյանքը Բանին մարմնացելու երեք հարյուր քսանհինգ տարում: Թաղվեց նրա սուրբ մարմինը ամենայն պատվով հովիվների ձեռքով:

Իսկ Ջենոն (Ջինան) թագավորի ժամանակ հիշյալ սուրբը երևաց մի վանականի ու հրամայեց, որ իր մարմինը տարվի Թորդանում (Տորդան) կառուցված մի եկեղեցի, և այդպես էլ արվեց:

Որոշ ժամանակ անց հոռոմների (Ռոմ) թագավորը հրամայեց, որ նրա մարմինը տեղափոխվի Կոստանդնուպոլիս (Կոստանդնուֆիա), և նրա մարմնից նշխարներ պահեցին հայոց թագավորության եկեղեցիներում, իսկ որոշ նշխարներ տեղափոխեցին Իտալիայի եկեղեցիները: Ամեն տարի մեծ հանդիսավորությամբ կատարում են նրա հիշատակը սեպտեմբեր (սյուլ) ամսի երեսունին: Նեապոլսի (Նաբուլի) թագավորության մեջ նույնպես կան այս սրբի որոշ նշխարներ, որոնց վրա հավատացյալներն անհամար հրաշքներ են տեսնում՝ ինչպես դիվախարների, հիվանդների ապաքինում կամ օձերի ու թունավոր միջատների կծածների բուժում: Այս բոլորը տեսնում են Նեապոլիս, Նաբոլու և Հոռոմ (Ռոմիա) քաղաքների բնակիչները: Մի եկեղեցի էլ կա Լիկուրնա (Ալիքուրնա) քաղաքում այս սրբի անվամբ կառուցված:

*
* *

Ով քրիստոնյա եղբայր, եթե կամենաս մանրամասն բացատրություն ստանալ այս փառավոր սրբի ու նրա հրաշքների մասին, նայիր հիսուսյան եղբայրներից հայր Անտոնիոս Մարի Բուրնոջիի (Բուրնոկի) պատմության գիրքը տպված Հոռոմ քաղաքում քրիստոնեական 1717 թվականին:

Այս բոլորը հիշտ է, քանզի Հայոց համայնքի հայրը հայազգի սուրբ Գրիգորիոսն է, և նրա շնորհիվ այս համայնքն ընդունեց կաթողիկե (ընդհանրական) հավատը՝ լրիվ հրաժարվելով կուսպաշտությունից: Այս բանը կատարվեց աստվածային մարդկությունից հետո երեք հարյուր թվականին:

Այս հայ ժողովուրդը շարունակեց հաստատ մնալ կաթողիկե (ընդհանրական) հավատի մեջ, մինչև որ երևաց այն մարդկանց հերետիկոսությունը, որոնք ուսուցանում էին, թե Տեր Քրիստոսը մեկ բնություն ունի: Այս ժամանակաշրջանում նրանք (հայերը) բաժանվեցին եկեղեցուց և մնացին հերետիկոսության մեջ մինչև հազար չորս հարյուր երեսունմեկ թվականը¹²: Այդ տարում նրանք պահանջեցին միանալ Պետրոսի եկեղեցուն, հոռոմական Պապ Եվգենիոս Չորրորդի¹³ օրոք, սակայն կարճ ժամանակ անց նորից դարձան իրենց հերետիկոսությանը և այսպես մնացին մինչև (որ կրկին միացան) մեծ Պապ Կղեմես Ութերորդի¹⁴ օրոք, սակայն քիչ ժամանակ անց նորից հեռացան հոռոմական

¹² 1341 թ. Ֆյորենտիայում գումարված եկեղեցական ժողովին մասնակից որոշ հայ պատգամավորներ ընդունել էին միանալ Հոռոմի եկեղեցուն: Տե՛ս Մ. արքեպ. Օրմանյան, Ազգապատում, Պեյրոթ, 1960, հտ. Բ, մասն Ա, էջ 2080—2096:

¹³ Եվգենիոս Դ (1431—1447):

¹⁴ Կղեմես Ը (1592—1605):

եկեղեցուց: Ապա մեծ Պապ Ուրբանոս Ութերորդի¹⁵ օրոք Առից դարձան եկեղեցու գիրկը, իսկ Հռոմի Պապ Աղեքսանդր Յոթերորդի¹⁶ օրոք մորթեցին իրենց միությունը հռոմեական եկեղեցու հետ: Այսպես արեցին մահ ինճոկենտիոն Տասնմեկերորդի¹⁷ օրոք: Վերջապես, հազար յոթ հարյուր քառասուներկու թվականին¹⁸ հայերը ստան հռոմեական եկեղեցու մեջ մաշատին¹⁹ կոչումը վերցնելով: Եվ եթե ուզենային (բոլորը) միանալ, պարտավոր էին (չուր) խառնել, վերացնել երեքսրբյան օրհնությունը²⁰, որն ավելացված է, Հռոմի Պապ Ուրբանոս Ութերորդի անունով կարդալ հավատո դավանության մշահաբանը, որ հռոմեական եկեղեցու կողմից է մշահակված, և, վերջապես, հնազանդ լինել ու հպատակվել Տեր Քրիստոսի տեղակալին, որը Հռոմի Պապն է, որին միացն և ուրիշ ոչ ոքի կարելի է ասել, որ առաքյալների գլուխ մար (Տեր) Պետրոսի անձն է ներկայացնում:

Հիշվում է, Մարի Աբդ ալ-Ահադ միաբանության վանականներից մեկի պատմության մեջ, որ Հայոց թագավորության մեջ²¹ որոշ եպիսկոպոսներ ժողով են գումարել, որոնք բոլորը մերժվածներ են եղել: Նրանք կաթողիկոս (ընդհանրական) հայերի կարգից վերացրել են (չուր) խառնելը: Այս անձնավորությունը ծանոթ է եղել հայերեն լեզվին: Եվ մա իրավացի է, քանզի սխալվում են այն մարդիկ, որոնք

¹⁵ Ուրբանոս Ը (1628—1644):

¹⁶ Աղեքսանդր Է (1655—1667):

¹⁷ Ինճոկենտիոն ԺԱ. (1676—1689):

¹⁸ 1742-ին Աբրահամ Արծիվյանը գնաց Հռոմ և հաստատվեց որպես հայ հռոմեական համայնքի պատրիարք: Մ. արքեպ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Բ, մասն Գ, էջ 2548—2549:

¹⁹ Հայտնի չէ, թե սա ի՞նչ մշահակություն ունի:

²⁰ Այս մասին տե՛ս Հ. Գաթրճեան (Հ. Տաշեան) Սրբազան պատարագամատուցք Հայոց, Վիեննա, 1897, էջ 652—653: Ս. Մալխասեան, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, Ա, էջ 584:

²¹ Հավանաբար Կիլիկիայում գումարված ինչ-որ ժողովի մասին է:

կարծում են, թե հայերը մախբան այդ ժողովը ըստ իրենց կարգի չէին խառնում: Այս մասին կարդա միշյալ պատմիչի գիրքը Սիրիա երկրի մասին:

Գերմանու Ֆարհատ²² եպիսկոպոսի վկայությունից պարզ երևում է, որ Հայոց համայնքի անկարգության պատճառը Հակոբ Բարադեոսն²³ էր: Ամիրաժեշտ է քեզ, ով ընթերցող, վերստին մայել միշյալ եպիսկոպոսի «Հավատի Առաքմությունների մասին» կոչված գիրքը, ուր մա ասում է, որ Հայոց համայնքի անկարգությունը, այսինքն ծոմապահությունների և տոների վերաբերյալ (տարբերությունները), ձուկ չուտեղ²⁴, (չուր) չխառնելը և երկսւրբյան օրհնությունը ավելացնելը, որն արգելված է, ապա այս բոլորը հնարել է Հակոբ Բարադեոսը և ամեն ջանք թափել, որ Հայոց համայնքի մեջ պահպանվեն, որպեսզի նրանց բաժանի հռոմեական եկեղեցու հետ միությունից, և հետևելով այս հերձվածող հերետիկոսին նրանք (հայերը) ջանացին մեր մարոնի համայնքի գրեթե փչացնել, ինչպես եղավ Կիպրոս կղզում և այլ վայրերում: Եվ եթե մեր պատրիարքարանի գանձարանում պահպանված չլինեին մեր գրեթե, ապա մեզ ևս կամքատանձին, թե չխաղվել ենք, ինչպես ամբաստանվեցին Կիպրոս կղզու մարոնիները, իսկ Կիպրոս կղզում ապրողները ոչ թե ասորի հերետիկոս կոչվեցին, այլ նյութապաշտ, քանի որ սխալմունքով ու մոլորությամբ էին հետևել հերձվածողներին և ոչ թե գիտակցությամբ կամ կարծիքների մեջ համատության մա կամակորության:

²² Գերմանու Ֆարհատ (1660—1732) մարոնի եպիսկոպոս և մշահավոր մատենագիր. G. Graf, Geschichte der christlichen arabischen Literatur. Vatican, 1949, էջ 406—428.

²³ Հակոբ Բարադեոս, ասորի եպիսկոպոս, միաբնակ ուսմունքի ջերմ պաշտպան, որի անունով միաբնակները կոչվել են հակոբիկներ:

²⁴ Հնձաշեր (Մ. արքեպ. Օրմանյան), Ծիսական բառարան, 1905, Ընդարձակ օրացույց Ա. Փրկիչեան հիմնադրանգի հայոց, Կ. Պոլիս, էջ 386:

